ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/67

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 հուլիսի 2022 թ. N 67

ԵՐԵՎԱՆԻ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գլինկայի 2

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022թ. հուլիսի 21-ին քննարկեց Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի (այսուհետ՝ ԵԹԱՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	11 փետրվարի 2021 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	20 սեպտեմբերի 2021 թ.
փորձագիտական այցի իրականացում	22-25 նոյեմբերի 2021 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	30 դեկտեմբերի 2021 թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	21 մարտի 2022 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

Կրթության ոլորտում ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը և դրան միտված քաղաքականությունն ընդհանուր առմամբ համապատասխանում են ուսումնական հաստատության որդեգրած առաքելությանը և համահունչ է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին: ԵԹԱՊՔ-ը որոշակիորեն իրականացնում է թեթև արդյունաբերությանը վերաբերող մասնագիտական կրթական ծրագրեր:

ՄԿԾ-ները կազմված են ՊԿՉ-ների հիման վրա և ունեն ձևաչափին համապատասխան իրենց մոդուլները: Մոդուլների բովանդակությունը հիմնականում ամբողջությամբ համապատասխանում է պետական կրթական չափորոշիչներին:

Ակնկալվող արդյունքները մեծամասամբ համապատասխանում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությանը, առկա են ՄԿԾ-ների բարելավման օրինակներ: Որոշ ՄԿԾ-ներում հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները և ներառվել են ժամանակակից և գործատուի համար պահանջարկված մոդուլներ:

Որոշ մասնագիտությունների գծով առկա է հանձնարարականների մշակման և ուսանողների մոտ գործնական հմտությունների և համապատասխան վերջնարդյունքների ձեռքբերմանը նպաստող դասվանդման արդի մեթոդների կիրառման լավ փորձ, սակայն դա չի տարածվում բոլոր ՄԿԾ-ների վրա:

ԵԹԱՊՔ-ն իր սահմանած նպատակների իրականացման համար ունի կայուն դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ, իրականացնում է գործընթացներ երիտասարդ կադրեր ներգրավելու և նրանց առաջխաղացման համար:

Դասախոսական կազմի գործունեությունն ապահովելու համար մշակվել և հաստատվել են համապատասխան կանոնակարգեր և ընթացակարգեր: Թեև քոլեջը չունի դասախոսական կազմի

ընտրության մշակված քաղաքականություն, սակայն վերջին երեք տարիների ընթացքում այն համալրվել է շուրջ 13 դասախոսներով: Քոլեջում կազմակերպվում են բաց դասեր, դասալսումներ, առկա են դասալսումների վերլուծություններ: Չնայած դասախոսական կազմը մասնակցում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, սակայն բացակայում է ներքին սեփական նախաձեռնողականությունը այս գործում:

ԵԹԱՊՔ-ը ՄԿԾ-ների իրագործման համար ապահովում է անհրաժեշտ և բավարար պայմաններ, ջանքեր է գործադրում ռեսուրսների բարելավման և դրանց նորացման ուղղությամբ, ընդհանուր առմամբ, ձևավորված է անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար: Չնայած, որ այդ լսարաններն ու լաբորատորիաները ունեն անհրաժեշտ և բավարար կահավորում, այնուամենայնիվ, առկա է ժամանակակից պահանջներին համապատասխան մեքենա-սարքավորումների և նյութերի կարիք: Խնդիր է նաև այն հանգամանքը, որ ռեսուրսային բազայի հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունը տեսանելի չի դարձնում դրանց բարելավման ենթակա ռեսուրսները:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Ընդհանուր առմամբ ԵԹԱՊՔ-ի ծավալած գործունեությունը համապատասխանում է ՄՈՒՀ-ի սահմանած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին: Նպատակներն ու խնդիրներն հիմնականում արտացոլում են շահակիցների կարիքները: Քոլեջում, որպես երկարաժամկետ պլանավորում, մշակվել և գործում է 2019-2024թթ. Ռազմավարական ծրագիրը, ինչը գրեթե ամբողջությամբ կրկնում է 2017-2022թթ. ՌԾ-ն: Այդ երկու ՌԾ-ները նույնական են, ունեն միևնույն ռազմավարական հիմնախնդիրներն ու դրանց լուծման համար անհրաժեշտ գործողությունների նկարագրությունները: ՌԾ-ի փոփոխությունը հիմնված չէ գործունեության արդյունավետության գնահատման և վերլուծության վրա, այլ պայմանավորված է եղել նոր տնօրենի ընտրությամբ:

Չնայած քոլեջում կառավարչական գործընթացների կարգավորման համար մշակվել և գործում են համապատասխան կանոնակարգեր և ընթացակարգեր, սակայն դրանց գերակշիռ մասը հաստատվել է ըստ անհրաժեշտության՝ միևնույն ամսաթվով ու արձանագրությունով:

Քոլեջում առկա է կառավարման համակարգի արդյունավետության խնդիր, մասնավորապես՝ ռազմավարական կառավարումն ու պլանավորումը թերի են, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մշտադիտարկման մեխանիզմներն արդյունավետ չեն, կառավարչական որոշումների կայացումը հիմնված չէ հավաստի տվյալների վրա, ընդհանուր առմամբ, բացակայում են ՄԿԾ-ի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրումը, վերլուծումը և հաջորդաբար կիրառումը գնահատող մեխանիզմները: ՄՈՒՀ-ն իր երկարաժամկետ, կարճաժամկետ պլաններով և դրանց հաշվետվություններով, որոնք առավելապես նկարագրողական են և չեն ներառում քանակական և որակական վերլուծություններ, չի կարողանում գնահատել ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ը փորձում է ներդնել որակի ապահովման համակարգ, սահմանել քաղաքականություն, ստեղծել է կենտրոն: Սակայն Որակի ներքին ապահովման համակարգը քոլեջում դեռևս ներդրման փուլում է, ուստի քաղաքականությունը, կանոնակարգը, գործառույթները հստակ սահմանված չեն,

բացակայում է ՄՈՒՀ-ի տեսլականը որակի ապահովման տիրույթում, կենտրոնը դեռևս ազդեցություն չունի ՄՈՒՀ-ի գործընթացների վրա և չի նպաստում քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.*

Քոլեջը հետազոտական ոլորտում սահմանել է իր առանձնահատկություններին ոչ համապատասխան բարձր նշաձող, ուստի ռազմավարությունն իրատեսական չէ, ռեսուրսները բավարար չեն հետազոտական գործունեություն իրականացնելու համար, թույլ է հետազոտական գործունեության և ուսումնառության միջև եղած կապը: Դասախոսական կազմը ևս հիմնականում հետազոտական բնույթի աշխատանքներ չի իրականացնում: Առկա չեն հետազոտական աշխատանքները խրախուսող մեխանիզներ:

ՄՈՒՀ-ն ունի մի շարք հուշագրեր, պայմանագրեր տարբեր կազմակերպությունների հետ, որոնց հիմնական գործունեությունը սահմանափակվում է ուսանողների պրակտիկաների անցկացմամբ: Կնքվել են պայմանագրեր նաև հայաստանյան բուհերի հետ, որը միտված է բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների՝ բուհի երկրորդ կուրսում ուսումը շարունակելու հնարավորությունների ստեղծման հետ:

Գործընկերների և գործատուների հետ համագործակցությունը նույնպես սահմանափակվում է պրակտիկաների կազմամկերպմամբ, չկան արտաքին կապերը խրախուսող համակարգված գործընթացներ: ՄՈՒՀ-ում օտար լեզուների իմացության ցուցանիշը ցածր է և դրա բարձրացմանը նպաստող գործընթացները բացակայում են:

ԵԹԱՊՔ-ում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ, վերջին տարիներին ավելացել են դիմորդների և ուսանողների քանակը: Քոլեջում սովորողները ստանում են անհրաժեշտ խորհրդատվություն և ունենում են լրացուցիչ պարապմունքների հնարավորություն: ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին՝ հանձինս Ուսանողական խորհորդի, սակայն ոուսանողների կարիքների վեր հանման մեխանիզմները դեռևս բավարար արդյունավետ չեն գործում: Ուսանողները նաև ստանում են որոշակի խորհրդատվություն Կարիերայի կենտրոնի կողմից:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ներկայացված ծրագրով քոլեջը, հաշվի առնելով փորձագիտական խմբի ներկայացրած խորհրդատվությունները, բացահայտված հիմնախնդիրների լուծման նպատակով հանձնառել է բարեփոխել իր գործունեության ոլորտների մեծ մասը, սակայն ոչ բոլոր խորհրդատվություններն են ընդգրկված բարելավման ծրագրում և կան խորհրդատվություններ, որոնք ճիշտ չեն ընկալվել հաստատության կողմից:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ՄԿԾ-ների մշտադիտարկումների միասնական քաղաքականություն և ընթացակարգեր ունենալու անհրաժեշտությանը՝ գործընթացներին մասնակից դարձնելով նաև շրջանավարտներին և գործատու-գործընկերներին,
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - կարիքի դուրսբերման հիման վրա դասախոսական կազմի պարբերաբար մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը,
   - մասնագիտական լսարանների և լաբորատորիաների ժամանակակից մեքենա-սարքավորումներով և նյութերով համալրմանը,
   - կրթության և հետազոտության փոխկապակցմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը
   - արտաքին կապերի զարգացմանը և գործատուների հետ համատեղ ռազմավարության մշակմանն ու իրագործմանը,
   - որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**

2022 թ. օգոստոսի 19
ք.Երևան